ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

12 սեպտեմբերի 2023թ. **ք. Երևան**

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Մխեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/19862/02/23 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայցվոր «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Հայցվոր) հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ **պատասխանող Երևանի քաղաքապետարանի** (այսուհետ՝ նաև Պատասխանող կամ Քաղաքապետարան)՝ **հայցելով** անվավեր ճանաչել (վերացնել) Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար Երևան համայնքի բազմաբնակարան շենքերի վերելակների ձեռքբերման նպատակով 10.02.2023թ. թիվ 3 որոշմամբ հայտարարված թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-23/8» ծածկագրով (այսուհետ՝ նաև Ծածկագիր) գնման ընթացակարգի (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 14.07.2023թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ (այսուհետ՝ նաև Արձանագրություն 4)՝ «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ-ին շտկում կատարելու մասին և 20.07.2023թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ (այսուհետ՝ նաև Արձանագրություն 5)՝ «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումները:

Դատարանը (դատավոր՝ Լ. Սաղոյան) 04.08.2023թ. կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում:

Կրկին ներկայացված հայցադիմումը 28.08.2023թ. հանձնվել է դատավոր Տ.Գրիգորյանի կազմին:

Դատարանը (դատավոր՝ Տ.Գրիգորյան) 30.08.2023թ. կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում:

Հայցվորը որոշումը ստացել է 04.09.2023թ.-ին և օրենքով սահմանված եռօրյա ժամկետում կրկին ներկայացրել է Դատարան, մուտք է եղել 07.09.2023թ.-ին, Դատավոր Դ. Մխեյանի աշխատակազմին է հանձնվել 12.09.2023թ.-ին:

Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի կողմից վերացվել են Դատարանի 30.08.2023թ. որոշմամբ արձանագրված խախտումները, հայցադիմումն ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:

Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՔԴՕ 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում հիմք ընդունելով

ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է Պատասխանողից պահանջել գնման գործընթացի հետ կապված վերջինիս տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող Երևանի քաղաքապետարանից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Պարզաբանել կողմերին, որ՝

- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.

- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

- հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Գործով եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի դատական պաշտոնական կայքի միջոցով 2023թ. հոկտեմբերի 16-ին:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Դ. ՄԽԵՅԱՆ**